ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Մարինե Գոչումյան, Բյուջետային գործընթացի համակարգման վարչության բյուջետային գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ք. Լյուբլյանա (Սլովենիայի Հանրապետություն), 2024 թվականի դեկտեմբերի 2-6 ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Պետական ծախսերի կառավարման ուսուցման (PEMPAL) ցանցի բյուջետային պրակտիկայի համայնքի (BCOP) կողմից կազմակերպվող Կենտրոնական, Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրների ՏՀԶԿ ավագ բյուջետային պաշտոնյաների տարածաշրջանային ցանցի տարեկան ժողովի նպատակն էր մասնակից երկրների օրինակով քննարկել բյուջետային բարեփոխումները, ծրագրային բյուջետավորման առավել արդյունավետ մեխանիզմները, զարգացնել և խորացնել գիտելիքները:

5. Քննարկված թեմաները.

Ժողովի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Բյուջեի բարեփոխումները Հայաստանում,
2) Ծրագրային բյուջետավորման նկարագիրը,
3) Լավագույն կիրառելի ցուցանիշները,
4) Կառավարչական հաշվետվողականություն,
5) Վարժություններ և գործնական խմբային աշխատանքներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում համառոտ ներկայացվել է մեր երկրի առաջիկա տարվա բյուջեի մասին օրենքում կիրառված բարեփոխումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը:

10.12.2024թ.